ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
МУНИЦИПАЛИТЕТ ВАНАНДА

Թիվ 164

Արմավիրի մարզ գ.Վանանդ

« 27 » 11 2018 թ.

հեռ.(0233) 6 - 12 - 22

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Հ.Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 26.11.2018 թ. թիվ 06 նիստի որոշումները:

Առդիր 14 էջ

Վանանդ
համայնքի ղեկավար Ձ. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26. նոյեմբերի 2018 թ. թիվ 06 նիստի

ՈՐՈՇՈՒՄ թիվ 18

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 06 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետ Ջ. Մանուկյան

2018 թ. նոյեմբերի 26

գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի [illegible]ավիրի մարզի

Վանանդ[illegible]ավագանու

2018 թ. նոյ[illegible] թիվ [illegible]8 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու թիվ 06 նիստի.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 06 նիստի օրակարգի հաստատումը:

/ Զեկ. Զ. Մանուկյան/

2. Համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու հարցը:

/ Զեկ. Զ. Մանուկյան /

3. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերի սահմանման հարցը:

/ Զեկ. Զ. Մանուկյան/

4. Վանանդի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման հարցը:

/ Զեկ. Զ. Մանուկյան/

5. Արմավիրի մարզի Վանանդ համայնքի կողմից 2019թ. մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելու հարցը:

/ Զեկ. Զ. Մանուկյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 նոյեմբերի 2018 թ. թիվ 06 նիստի

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՆԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Կանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Կանանդի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 31-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Կանանդի համայնքապետ Ջ. Մանուկյան

2018 թ. նոյեմբերի 26

գ. Կանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի ավագանու

2018 թ. նոյեմբերի [illegible] թիվ 09-Ն որոշման

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ

Եկամուտներ

Հողի հարկը՝ հոդված պակասեցնել 8607.2 հազար դրամ

Գույքահարկ փ/մ՝ պակասեցնել 1250.0 հազար դրամ

Տեղական վճար պակասեցնել 2160.0 հազար դրամ

Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող /գանձվող/ այլ վճարները ավելացնել 300.0 հազար դրամ

Ծախսեր

-- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4111 հոդվածը պակասեցնել 2118.5 հազար դրամ

-- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4214 հոդվածը պակասեցնել 29.0 հազար դրամ

-- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4212 հոդվածը պակասեցնել 400.0 հազար դրամ

-- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4234 հոդվածը պակասեցնել 92.0 հազար դրամ

-- 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4241 հոդվածով նախատեսել 135.0 հազար դրամ

-- 01 բաժնի 6 խմբի 1 դասի 4819 հոդվածով նախատեսել 20.6 հազար դրամ

-- 04 բաժնի 2 խմբի 1 դասի 4111 հոդվածը պակասեցնել 115.0 հազար դրամ

-- 04 բաժնի 2 խմբի 1 դասի 4241 հոդվածը պակասեցնել 278.0 հազար դրամ

-- 06 բաժնի 3 խմբի 1 դասի 4212 հոդվածը պակասեցնել 931.3 հազար դրամ

-- 06 բաժնի 4 խմբի 1 դասի 4212 հոդվածը պակասեցնել 200.0 հազար դրամ

-- 09 բաժնի 1 խմբի 1 դասի 4639 հոդվածը պակասեցնել 6163.4 հազար դրամ

-- 11 բաժնի 1 խմբի 2 դասի 4891 հոդվածը պակասեցնել 1545.6 հազար դրամ

-- 10 բաժնի 9 խմբի 1 դասի 4729 հոդվածը պակասեցնել 840.0 հազար դրամ

-- 10 բաժնի 7 խմբի 1 դասի 4729 հոդվածով նախատեսել 840.0 հազար դրամ

ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ

-- 09 բաժնի 1 խմբի 1 դասի 5122 հոդվածը պակասեցնել 200.0 հազար դրամ և ուղղել՝

-- 01 բաժնի 6 խմբի 1 դասի 5113 հոդվածին 100.0 հազար դրամ

-- 06 բաժնի 4 խմբի 1 դասի 5113 հոդվածին 100.0 հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26. նոյեմբերի 2018 թ. թիվ 06 նիստի

ՈՐՈՇՈՒՄ N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի վարչական տարածքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետ Ֆ. Մանուկյան

2018 թ. նոյեմբերի 26

գ. Վանանդ

ՀԱՅԱՍ[illegible]ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱ[illegible] ԳԱՎԱՌԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 20[illegible]
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-[illegible] ՀԱՄԱՐ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենադրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝7000 / յոթ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ,

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար /դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000/քսանհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000/քսանհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000/հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 /մեկ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենադրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 500/հինգ հարյուր/ դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զարգարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, տվյալ օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000/ հինգ հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000/ մեկ հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 / տասնմեկ հազար/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000/ տասնչորս հազար դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 21000 /քսան մեկ հազար/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000/ քսան վեց հազար/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 / քառասուն վեց հազար/ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000/ մեկ հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000/ տասնմեկ հազար/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000/ տաս չորս հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000/ քսան մեկ հազար/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000/ քսան վեց հազար/ դրամ

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000/ հիսուն հազար/ դրամ

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 300/ երեք հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության

համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված գազային կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 40000 / քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000/մեկ հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000/վեց հազար/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000/ տասնմեկ հազար / դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 /տասնվեց հազար/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21000/ քսանմեկ հազար/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 35000/ երեսուն հինգ հազար/ դրամ,

5) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500/ հինգ հարյուր/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500/ մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000/ երեք հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000/ հինգ հազար/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000/ տաս հազար/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000/ քսան հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար 50000 /հիսուն հազար /Հայաստանի Հանրապետության դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000/ քսանհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 / հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ.

4) սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

10. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 /մեկ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումների ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 / հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5000 /հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

13. Համայնքի տարածքում զբաղեցնելու հոգեհանգստի (դրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000/ հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

14. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատուն շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ յուրաքանչյուր տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 / երկու միլիոն հինգ հարյուր հազար /Հայաստանի Հանրապետության դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 /յոթ միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տասը միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքներում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները՝

15. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 7500/ յոթ հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

16. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում սահմանման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական

ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2000/երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

17. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից փողոցներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 2000/ երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

18. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց թանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100/ մեկ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ.

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10/տաս/ Հայաստանի Հանրապետության դրամ.

2) Իրավաբանական անձանց համար՝

ա. առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ ամսական 50/հիսուն/ դրամ՝ 1 քառ. մ.

բ. հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ՝ ամսական 30/ նասնիինգ/ դրամ 1 քառ. մ.

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ ամսական՝ 10/տաս/ դրամ՝ 1 քառ. մ

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ ամսական՝ 5/հինգ/ դրամ՝ 1 քառ. մ.

3) Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2000/ երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ.

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 5000/ հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

19. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և վերամշակման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել 10000/տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26. նոյեմբերի 2018 թ. թիվ 06 նիստի

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ,ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ, 28-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշեց՝

1. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշել 175.000 ՀՀ դրամ

2. Որոշել աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

3. 1974թվականից հետո ծնվածների համար նախատեսել լրավճար՝ ամսական ային դրույքաչափի 5%-ի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Մլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետ Ջ. Մանուկյան

2018 թ. նոյեմբերի 26

գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Վանանդի գյուղապետարանի ավագանու

2018 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 21 որոշման

2019 թ. Վանանդի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը --- 14
2. Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր

հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը	Լրավճար
1	Համայնքի ղեկավար	1	175000	-
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	143000	-
	Ընդամենը	2	318000	-
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			-
1	Աշխատակազմի քարտուղար	1	138000	-
2	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	2	120000	-
3	Աշխատակազմի առաջատար մասնագետ	2	109000	-
4	Աշխատակազմի I կարգի մասնագետ	1	97000	-
	Ընդամենը	6	693000	-
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			-
1	Ջրային տեխնիկ	1	86000	-
2	Ծառայողական ավտոմեքենայի վարորդ	1	74000	4000
3	Գյուղապետարանի վարչական շենքի պահակ	1	73000	-
4	Գյուղապետարանի վարչական շենքի հավաքարար	1	73000	-
5	Մանկապարտեզի պահակ	1	73000	4000
	Ընդամենը	5	382000	8000
	ԳՐԱԴԱՐԱՆ			
1.	Գրադարանի վարիչ	1	73000	-
	Ընդամենը	1	73000	-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26. նոյեմբերի 2018 թ. թիվ 06 նիստի

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի համայնքապետարանի կողմից 2019 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Ալոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետ Ջ. Մանուկյան

2018 թ. նոյեմբերի 26

գ. Վանանդ

ՀԱՍՏԱՏՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Վանանդի գյուղ[illegible] համայնքի ավագանու

2018 թվականի նոյեմբեր[illegible]-ի թիվ [illegible]-Ն որոշման

Վանանդ համայնքի կողմից 2018 թ. մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը

1. Համայնքի բնակիչ հանդիսացող անձանց խմելաջրի ապահովման համար սահմանել՝ 1 մետր խորանարդի համար 120 դրամ: